ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/27786/02/20
Նախագահող դատավոր՝ Ն. Գաբրիելյան
Դատավորներ՝ Հ. Ենոքյան
Կ. Համբարձումյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/27786/02/20**
2025թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/27786/02/20 քաղաքացիական գործով 09.06.2025 թվականին կայացված որոշման վերաբերյալ

«09» հունիսի, 2025թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 09.06.2025 թվականին քննելով ըստ Անդրանիկ Պապոյանի հայցի ընդդեմ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, իսկ անհնարինության դեպքում այլ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու, աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում՝ հատուցման գումարը բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.06.2022 թվականի որոշման դեմ Հիմնադրամի բերած վճռաբեկ բողոքը, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.06.2022 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել՝ վեճն, ըստ էության, սպառված լինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի դատավոր Արսեն Մկրտչյանս, համաձայն չլինելով 09.06.2025 թվականի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Հատուկ կարծիքը շարադրելիս հիմք են ընդունվել Որոշման մեջ ներկայացված՝ վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները, վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները, վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը:

2. Հատուկ կարծիքի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝ Հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ***09.07.2020 թվականի*** հրամանով ***15.09.2020 թվականից*** լուծել է հայցվորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

18.09.2020 թվականին դիմելով Դատարան՝ հայցվորը պահանջել է՝

- անվավեր ճանաչել Հիմնադրամի ***09.07.2020 թվականի*** հրամանը,
- իրեն վերականգնել նախկին աշխատանքում,
- նախկին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում վերականգնել նույն կազմակերպությունում իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքում,
- Հիմնադրամին պարտավորեցնել վճարել աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով,
- Հիմնադրամին պարտավորեցնել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, ***15.09.2020 թվականից*** մինչև աշխատանքում փաստացի վերականգնվելու պահը:

Որպես հայցի փաստական հիմնավորում՝ հայցվորը հայտնել է, որ Հիմնադրամն իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի խախտմամբ, այն է՝ չի առաջարկել աշխատանքային պայմանագիրը լուծելու ժամանակ իր մոտ առկա և իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, այն է՝ ուսուցանող մարզչի թափուր հաստիքը, նշված հաստիքն առաջարկվել է աշխատանքային պայմանագիրը լուծելուց, հայցադիմում ներկայացնելուց ու տվյալ աշխատանքային վեճով վարույթ հարուցելուց հետո միայն, մինչդեռ պետք է առաջարկվեր մինչև աշխատանքից ազատելու մասին հրամանն ընդունելն ու աշխատանքային պայմանագիրը լուծելը:

Գործի փաստեր համաձայն՝ Հիմնադրամը ***05.04.2021 թվականի*** հրամանով ***09.07.2020 թվականի*** վիճարկվող հրամանում կատարել է փոփոխություն՝ վիճարկվող հրամանի եզրափակիչ մասի 2-րդ կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«2. Վերականգնել Անդրանիկ Պապոյանի մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, այն է՝

2.1. Անդրանիկ Պապոյանին 2020 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի ապրիլի 12-ը համարել Հիմնադրամի Երևան քաղաքի Թումո կենտրոնի ուսուցանող մարզիչի պաշտոնում նշանակված՝ ամսական 140,000 ՀՀ դրամ (…) աշխատավարձով.

2.2. Ստաժը հաշվարկելիս և աշխատավարձը վճարելիս հաշվի չառնել այն հանգամանքը, որ Անդրանիկ Պապոյանը 2020 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2021 թվականի ապրիլի 12-ը փաստացի չի կատարել որևէ աշխատանքային գործառույթ.

2.3. ***Անդրանիկ Պապոյանին առաջարկել աշխատանք***՝ Երևան քաղաքի Թումո կենտրոնի ուսուցանող մարզիչի պաշտոնում 140.000 ՀՀ դրամ (…) աշխատավարձով (…)՝ աշխատանքի սկիզբ հաշվարկելով 2021թ. ապրիլի 13-ից.

2.4. Անդրանիկ Պապոյանի կողմից սույն հրամանի 2.3 կետում ***նշված առաջարկին համաձայնվելու դեպքում,*** աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով շարունակել աշխատանքային հարաբերությունները Երևան քաղաքի Թումո կենտրոնի ուսուցանող մարզիչի պաշտոնում.

2.5. Անդրանիկ Պապոյանի կողմից սույն հրամանի 2.3 կետում ***նշված առաջարկը չընդունելու, այդ թվում՝ մինչև 2021 թվականի ապրիլի 12-ը առաջարկին չարձագանքելու դեպքում համարել*** Անդրանիկ Պապոյանի հետ Երևան քաղաքի Թումո կենտրոնի ուսուցանող մարզիչի ***աշխատանքային հարաբերությունները դադարեցված 2021 թվականի ապրիլի 13-ից՝ սահմանված կարգով կատարելով վերջնահաշվարկ»:***

Վկայակոչված փաստերի համադրումից հետևում է, որ՝

- հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է ***09.07.2020 թվականի*** հրամանով ***15.09.2020 թվականից,***

- Հիմնադրամն ընդունել է ***09.07.2020 թվականի վիճարկվող*** հրամանով հայցվորի իրավունքների խախտման փաստը՝ նկատի ունենալով, որ պայմանագիրը լուծելիս հայցվորին չի առաջարկվել իր մոտ առկա՝ այլ աշխատանքը (ուսուցանող մարզիչի թափուր հաստիքը),

- նշված խախտումը վերացնելու նպատակով հայցվորի կողմից Դատարան դիմելուց հետո՝ գործի քննության ընթացքում, Հիմնադրամն ընդունել է ***05.04.2021 թվականի*** հրամանը, որով վիճարկվող՝ ***09.07.2020 թվականի հրամանում*** կատարել է փոփոխություններ,

- կատարված փոփոխություններով հայցվորը ***15.09.2020 թվականից*** մինչև ***12.04.2021 թվականը*** համարվել է այլ պաշտոնում նշանակված,

- ***05.04.2021 թվականի*** հրամանով նշված պաշտոնն ***առաջարկվել է*** հայցվորին՝ աշխատանքի սկիզբ համարելով ***13.04.2021 թվականը,***

- աշխատանքային հարաբերությունները շարունակելու հնարավորությունը դիտարկվել է հայցվորի կողմից ***առաջարկին համաձայնելու դեպքում***,

- նախատեսվել են ***առաջարկին չհամաձայնելու*** կամ առհասարակ ***չարձագանքելու հետևանքները,*** այն է՝ հայցվորի հետ աշխատանքային հարաբերությունները ***13.04.2021 թվականից*** համարել դադարեցված՝ սահմանված կարգով կատարելով վերջնահաշվարկ,

- արձանագրվել է նաև, որ հայցվորի կողմից առաջարկը չընդունելու դեպքում վերջինիս որևէ իրավունք չի կարող համարվել խախտված հաստիքի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հետևանքով:

Վկայակոչված փաստերի լույսի ներքո նախ հարկ եմ համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոքի քննության սահմաններում սույն գործով սուբյեկտիվ իրավունքների վերաբերյալ վեճը հանգուցալուծված՝ վեճը սպառված լինելու մասին եզրահանգում անելիս Վճռաբեկ դատարանը նախ պետք է պարզաբաներ, որ թեև գործատուն զրկված չէ իր կողմից ընդունված անհատական իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը կասեցնելու և դադարեցնելու իրավունքից, ***այդուհանդերձ,*** վեճը սպառված լինելու վերաբերյալ եզրահանգում անելիս անհրաժեշտ է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտել կատարված փոփոխության բովանդակությունը, ինչպես նաև կողմերի հետագա վարքագիծը՝ պարզելու՝ արդյո՞ք դրանով նյութաիրավական վեճը սպառվում է, թե՝ ոչ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը վեճը սպառված լինելու մասին եզրահանգում է արել՝ բացառապես հիմք ընդունելով այն, որ *Հիմնադրամի գլխավոր տնօրենի 05.04.2021 թվականի հրամանով 09.07.2020 թվականի հրամանում կատարվել է փոփոխություն, Անդրանիկ Պապոյանը 15.09.2020 թվականից մինչև 12.04.2021 թվականը համարվել է Հիմնադրամի Երևան քաղաքի Թումո կենտրոնի ուսուցանող մարզիչի պաշտոնում նշանակված՝ ամսական 140,000 << դրամ (...) աշխատավարձով: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործի առաջին ատյանի դատարանում քննության ընթացքում* ***Հիմնադրամը կամովին հայցվորի խախտված իրավունքը վերականգնել է,*** այն է՝ ***05.04.2021 թվականի*** հրամանով Հիմնադրամի ***09.07.2020 թվականի հրամանի գործողությունը դադարել է:***

Այսինքն՝ վեճը սպառված լինելու մասին եզրահանգում անելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել *վիճարկվող հրամանի գործողությունը Հիմնադրամի կողմից կամովին դադարեցնելը*

(վիճարկվող հրամանի գործողությունը դադարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևակերպումը նույնպես խնդրահարույց է թվում) ու հայցվորին թափուր հաստիքում նշանակված համարելը:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից խնդրարկված մյուս պահանջներին, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դրանց բնույթին, արձանագրել է միայն, որ *դրանք իրենց բնույթով ածանցյալ են, հետևաբար աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու հիմնական պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճելու դեպքում, այդ մասերով ևս գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ հայցվորի նախկին աշխատանքում վերականգնման անհնարինությունն արձանագրվել է թե Դատարանի վճռով և թե Վերաքննիչ դատարանի որոշմամբ:*

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հաշվի չի առել, որ դիմելով Դատարան՝ հայցվորն իր անհամաձայնությունն է հայտնել վիճարկվող հրամանի իրավաչափության կապակցությամբ: Հետևաբար հայցվորի և Հիմնադրամի միջև ծագած վերը նշված ***վեճն ըստ էության սպառված*** լինելու մասին եզրահանգում անելու համար անհրաժեշտ պայման է հայցվորի կողմից խնդրարկված հայցապահանջների վերաբերյալ կողմերի միջև տարաձայնության՝ վեճի բացակայության փաստի արձանագրումը, ինչն այլևս ինքնանպատակ է դարձնում վեճի ըստ էության քննումը և ներկայացված պահանջի հիմնավորվածության քննարկումը: Այսինքն՝ վեճի ըստ էության սպառված լինելու համար հայցվորի կողմից Դատարանի առջև բարձրացված հարցերը պետք է հանգուցալուծվեն կամ հանգամանքների բերումով այլևս կորցնեն արդիականությունը, այսինքն՝ վերացած լինի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունն իրականացնելու անհրաժեշտությունը *(նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանը 22.09.2023 թվականի թիվ ՎԴ/2102/05/20 և 28.06.2024 թվականի թիվ ՎԴ/2347/05/19 վարչական գործերով):*

Սույն՝ աշխատանքային վեճով հայցվորի դատական պաշտպանության դիմելու հիմնական նպատակն իր վերաբերյալ կայացրած հրամանն անվավեր ճանաչելն է, նախկին աշխատանքում վերականգնելն ու հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելն է, այսինքն՝ վեճը հրամանի իրավաչափության հարցի շուրջ է: Վեճը կարող է սպառված համարվել միայն այն դեպքում, երբ վերանում է տվյալ վեճի առանցքում գտնվող սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, այն է՝ վերականգնվում է խախտված իրավունքը, որի պաշտպանությամբ շահագրգիռ անձը դիմել է դատարան:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն անտեսել է Հիմնադրամի կողմից ընդունված ***05.04.2021 թվականի*** անհատական իրավական ակտի վիճահարույց կետերը: Մասնավորապես ***05.04.2021 թվականի*** անհատական իրավական ակտի ***2.3, 2.4 և 2.5 կետերից*** հետևում է, որ այն ընդունելով՝ Հիմնադրամը հետապնդել է միայն մեկ նպատակ՝ խուսափել հարկադիր պարապուրդի համար նախատեսված գումարները վճարելուց, ***2.5 կետը*** սահմանում է հայցվորի կողմից գործատուի առաջարկը չընդունելու դեպքում վրա հասնող անբարենպաստ հետևանքները, այն է՝ հայցվորի հետ աշխատանքային հարաբերությունները ***13.04.2021 թվականից*** դադարած համարելն այն դեպքում, երբ Հիմնադրամի կողմից վիճարկվող հրամանն օրենքով սահմանված կարգի խախտումով ընդունված լինելու փաստի դատական կարգով հաստատումը հանգեցնելու էր ***15.09.2020 թվականից*** սկսած հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի բռնագանձման պահանջի բավարարմանը, ինչի վերաբերյալ, սակայն, որևէ կարգավորում ***05.04.2021 թվականին*** ընդունված հրամանը չի բովանդակում:

Վեճի բացակայության մասին հնարավոր կլիներ հետևություն անել առնվազն այն դեպքում, երբ Հիմնադրամը հայցվորին վերականգներ նախկին կամ համարժեք այլ աշխատանքում (տվյալ դեպքում մարզիչի թափուր հաստիքում)՝ օրինակ միաժամանակ ***նրան***

վճարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար կամ ընդունված փոփոխություններով արձանագրելով նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար համապատասխան գումարները հայցվորին վճարելու անհրաժեշտությունը, ինչը նույնպես առկա չէ:

Գտնում եմ, որ Հիմնադրամի առաջարկած փոփոխությունների վերաբերյալ հայցվորի համաձայնության բացակայության պայմաններում նշված կետերի առկայությունն ինքնին բավարար է՝ վեճի առկայության փաստն արձանագրելու համար, ինչն էլ իր հերթին բացառում է վեճը սպառված լինելու վերաբերյալ հետևություն անելու իրավական հնարավորությունը:

Ուստի նկատի ունենալով, որ սույն գործի փաստերի համակցությունը բավարար չէ սույն աշխատանքային վեճն ըստ էության սպառված լինելու վերաբերյալ հետևության հանգելու համար, գտնում եմ, որ հարուցված հայցի շրջանակներում պետք է իրականացվեր գործի ըստ էության քննություն և լուծում, որպիսի իրավաչափ հետևության հանգել են ստորադաս դատարանները:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**